ԲՆԻԿ ԵՎ ՓՈԽԱՌՅԱԼ ՏՈՊՈՖՈՐՄԱՆՏՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դիլբարյան Ն. (ԵՊՀ, Հայաստան)
n.dilbaryan@gmail.com

Բանալի բառեր՝ տեղանվանական համակարգ, արտալեզվական գործոններ, կազմության կաղապար, տեղանվանահիմք, ածանց, ածանցակերպներ:

Արդի Հայաստանի տեղանվանական համակարգը ձևավորվել է Հայաստանի անկախ Հանրապետության կազմավորման առաջին իսկ պահերից՝ որպես ժառանգություն ստանալով Հայաստանի Խորհրդային Հանրապետության տեղանվանական համակարգը, որն ինքնին պատմական անցյալի գաղափարական կնիքն էր կրում, որովհետև տեղանունները լեզվի բառապաշարի այն յուրօրինակ շերտ են, որն առավել ենթակա է արտալեզվական գործոնների ազդեցության:

Օտար նվաճողները, իշխող գաղափարական կառույցները կարող են ջնջել, սրբագրել տեղանվանական մեծ պատմական շերտեր՝ փոխարենն ամրակայելով իրենց քաղաքական նպատակներին հարմար նշաններ: ՀՀ տարածքի տեղանունների հայկականացումը կամ դրանց հնագույն շերտերի վերականգնումը շարունակում է օրակարգային խնդիր մնալ, այս տեսանկյունից հսկայական աշխատանք է կատարված, բայց օտար, հատկապես թուրքական տեղանունների հայկականացումը հաճախ հանգեցնում է պարզունակ կաղապարների կիրառման, դրանց կրկնության, տեղանունների սկզբնաձևերի մոռացման:

Ուստի հայկական տեղանունների հիմնական կաղապարների տարբերակումը և դասակարգումը, բնիկ և փոխառյալ

տեղանվանահիմքերի, ածանցների և ածանցակերպների լեզվաբանական քննությունն ունի գիտական, կիրառական լուրջ նշանակություն:

Այս զեկուցման նպատակն է համաժամանակյա, նկարագրական և տարժամանակյա իմաստաբանական վերլուծության ենթարկել արդի Հայաստանի տեղանվանահիմքերը և տեղանվանակերտ ածանցներն ու ածանցակերպ մասնիկները՝ դրանց կիրառական և կենսունակության ներուժի բացահայտմամբ: Անվանադրման գործընթացը հարատև է:

NATIVE AND BORROWED TOPOFORMANTS (BASE-FORMERS) IN THE TOPONYMY OF MODERN ARMENIA

Dilbaryan N. (Yerevan State University, Armenia)